

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ՏԻԳՐԱՆ ՀԱՆՈՒՄՅԱՆԸ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Հախումյանը (1894 - 1973 թթ.) թողել է գրական - գիտական հարուստ ժառանգություն, որ, դժբախտաբար, ամբողջությամբ հրատարակված չէ: Մոսկվայի համալսարանում ստանալով պատմաբանասիրական և իրավաբանական կրթություն՝ նա բեղուն գործունեություն է ծավալել այդ բնագավառներում, զբաղվել է գեղարվեստական թարգմանությամբ, գրել ինքնուրույն ստեղծագործություններ, կատարել խմբագրական աշխատանք:

Տ. Հախումյանի թողնուցների մեջ, որ պահվում են ընտանեկան արխիվում, կա մի ծոցատետր՝ հետևյալ բովանդակությամբ.

ա) «Գրական լեզվի բարելավման խնդիրը», առանց էջակալման, 19 էջ, թվագրված՝ 26. X. 1933.

բ) «Մի քանի խոսք Ալազանի «Մաքառումների» մասին», 1-12 էջ, 1. XI. [1]1933.

գ) «Մի քանի խոսք երիտգրողների և երիտգրականության մասին», 1-13 էջ, 12. XI. 1933:

Հավանաբար բոլորը հրապարակային ելույթների սղագրություն են: Հայտնի է, որ 1930-ական թվականներին Տ. Հախումյանը գործունե մասնակցություն է ունեցել Հայաստանի թատերական և գրական կյանքին. հիշյալ ելույթների վերնագրերն ու հաճախականությունը նույնպես դրա վկայությունն են:

Մույն հրապարակումը, ինչպես ենթափերձագիրն է հուշում, արձագանք է լեզվաբան Գուրգեն Սևակի՝ 1933 թ. նոյեմբերի 26-ի զեկուցման: Այդ օրը տեղի է ունեցել մըտքերի աշխույժ փոխանակություն, մասնակցել են նշանավոր գրողներ, մտավորականներ, այդ թվում՝ Եղիշե Չարենցը: Նրանք էական դիտողություններ ու առաջարկություններ են արել, բայց, դժբախտաբար, ժամանակի մասույլն ըստ արժանվույն չի անդրադարձել կենսական նշանակություն ունեցող այդ ասույիսին: Տ. Հախումյանի ելույթի հրապարակումով թերևս փոքր-ինչ մեղմանա այդ բացը: Այս սուղ էջերի մեջ ընթերցողը կգտնի շատ մուրբ դիտարկումներ՝ արված գրողի, թարգմանչի, գիտնականի եռյակ մտություններ, հայրենի գրականության ու մշակույթի զարգացման նկատմամբ շահագրգիռ վերաբերմունքով:

Ա. Գ. ՄԱԴՈՑԱՆ

ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐԸ (ընկ. Սևակի՝ 1933 թ. 26. X -ի զեկուցման առթիվ)

Ընկեր Սևակի փորձը շատ ողջունելի է, ընկերներ:

Բայց՝ միայն փորձը:

Կատարումը հարուստ էր բազմաթիվ թերություններով:

Կատարումը շատ անկատար էր (երևի ընկ. Սևակը կասի, որ սա լեզվի աղքատություն է. «Կատարումը անկատար էր», բայց ես դիտմամբ եմ գործ ածում այս ոճը, վասնզի իրոք այդպես էր):

Չեկուցման հիմնական արատը, նրա օրգանական թերությունը որոշ՝ պարզ և հետևողական սխտեմի բացակայությունն էր:

Կարելի է հաստատապես ասել, որ հենց դրանից էլ առաջացավ այն դրությունը, երբ ժողովականները՝ շատ աշխույժ և բարձր տրամադրության մեջ՝ ծիծաղում էին նրա բերած «նմուշները» լսելիս և ապա՝ անմիջապես հարց էին տալիս, թե այդ նմուշը մեր լեզվի ո՞ր տեղնդնեցն է ապացուցանում և կամ թե ընդհանրապես «առակա զի՛նչ ցուցանէ»:

Իմ կարծիքով՝

սխտեմ չկար և՛ զեկուցողի տեսակետների մեջ, սխտեմ չկար և՛ նյութի դասավորության մեջ:

Փորձենք հիմնավորել:

Թեզ առաջին.

Մեր նախահոկտեմբերյան գրական լեզուն մի արհեստական լեզու էր, որով խոսում և գրում էին մինչև հեղափոխությունը:

Շատ տարօրինակ մի թեզ:

Ես դեռ մի կողմ եմ թողնում քաղաքական և գիտական գրականությունը:

Իբրև գրող՝ ես ուզում եմ խոսել միայն գեղարվեստական գրականության լեզվի մասին:

Թողնում եմ մի կողմ նաև այն վիճելի մոմենտը, որ ընկ. Սևակը ամբողջ հայ գրականության լեզուն՝ սկսած Նազարյանի և Խ. Աբովյանի ժամանակներից մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը՝ ընդհանուր մի ամբողջություն համարելով, անվանում է նախահոկտեմբերյան գրական լեզու:

Կարծես թե այդ հսկայական ժամանակաշրջանը զարմանալիորեն խաղաղ, սոցիալական տեղաշարժերի տեսակետից անվրդով և միօրինակ մի ժամանակաշրջան էր և՛ զուրկ էր լեզվի համար կարևոր նշանակություն ունեցող ազդեցություններից:

Այս դեռ, ասում եմ, թողնե՛նք:

Բայց կարելի՞ է արդյոք ժխտել այն ակնբախ փաստը, որ այդ «արհեստական» կոչված լեզուն եղել է անցյալի մեր խոշոր գրողների, մեր լավագույն կլասիկների լեզուն:

Կարելի՞ է մոռանալ միթե, որ այդ «արհեստական» լեզվով տարիների ընթացքում գրել, մտքեր են հուզել և կազմակերպել մեր այն բոլոր գրողները, որոնց մենք այսօր ամենայն իրավամբ կլասիկներ ենք անվանում:

Հարց հարուցանելով մեր բարբառներից և գրաբարից օգտվելու մասին, զեկուցողը խնդիրն այնպես է ձևակերպում, որ ստացվում է տպավորություն, թե անցյալի մեր խոշորագույն գրողները այդ աղբյուրներից բնավ չեն օգտվել և կամ թե՛ այնքան քիչ են օգտվել, որ նրանց լեզուն մնացել է անշունչ, անհասկանալի և՛ այդ իսկ պատճառով, կարելի է համարել այն չիճովհիկական՝ բյուրոկրատիկ մի լեզու:

Երանի չե՞ր լինի, սակայն, որ մեր այսօրվա գրողներից շատերը գրեին Հովհ. Թումանյանի, կամ Օհրվանգադեի, կամ Նար-Ռոսի «չիճովհիկական, անհասկանալի» լեզվով:

Ես կարծում եմ, որ խնդրի այսօրինակ դրվածքը միանգամայն սխալ է: Մեր նախահոկտեմբերյան լեզուն միատարր լեզու չէ:

Դա այն լեզուն է, որով գրված են մեր գրականության լավագույն գործերը:

Դա այն լեզուն է, որ տարիների ընթացքում կրթել և դաստիարակել է մեր գրագետ և գիտակից զանգվածներին՝ ժամանակի առաջավոր գաղափարների ոգով:

Դա այն լեզուն է, վերջապես, որով մենք թարգմանել ենք անցյալում Տոլստոյը, Իբսենը, Հաուստմանը, Տեներ, Սենկևիչը, Օիլլերը, Մոպասանը և աշխարհիս ամենահարուստ բառապաշար ունեցող մեծն Վիլյամ Օեքսպիրը:

Ո՞վ կարող է պնդել, թե դա աղքատ, անճարակ և արհեստական լեզու էր:

Թեզ երկրորդ.

Մեր այսօրվա գրական լեզուն միօրինակ չէ: Նա կախված է զանազան գրողների, թարգմանիչների և ոճաբանների ճաշակից: Նա բազմազան է և՛ խայտարեղես:

Չհասկացանք, ճիշտն ասած, թե ի՞նչ է պահանջում ընկ. Սևակը:

Դե՛մ է բազմազանության, ի՞նչ է ...

Ուզում է, որ բոլորն էլ միատեսա՞կ գրեն:

Իհարկե, եթե խոսքը գա գիտական որոշ տերմինների՝ միօրինակությունը անհրաժեշտ է զուտ նպատակահարմարության տեսակետից:

Բայց դրանից դուրս՝ ի՞նչ է, վա՛տ է միթե, որ լեզվի բառամթերքը հարստացնելու և այն ավելի ճկուն ու երանգավոր դարձնելու նպատակով՝ մեր գրողները, թարգմանիչները և ոճաբանները միևնույն հասկացությունն արտահայտելու համար մի շարք բառեր են գործածում:

Չէ՞ որ, եթե հետևողականորեն շարունակելու լինիք այս թեզը, պիտի գանջ այն արտաոտց եզրակացության, որ առհասարակ ավելորդ են այսպես կոչված հոմանիշ բառերը:

Հետո՞ սա ի՞նչ չքավորացման տենդենց է:

Իրո՞ք որ տենդ և ոչ թե՛ տենդենց:

Ընկ. Սևակը կարծում է, օրինակ, որ եթե կա «ճգնաժամ» բառը, այլևս բնավ կարիք չկա «կրիզիս» գրելու, կամ ասելու:

Բայց ընկ. Սևակը մոռանում է, որ աշխարհիս բոլոր լեզուների մեջ էլ հավասարապես (բացառությամբ վայրենի ցեղերի) գրեթե և ո՛չ մի բառ սոսկ այս կամ հասկացությունը չէ միայն, որ արտահայտում է, կամ՝ այդ հասկացության մշտապես նույն՝ ստատիկ, անշարժ վիճակը, այլև, որ գլխավորն է ստեղծագործողի համար, նաև այդ հասկացության անթիվ ու անհամար տարբեր նյութաններից որևէ մեկը:

Եվ հենց այդ պատճառով է, որ ինչքան լեզուն հարուստ է և ճկուն, այնքան շատ են նրա հոմանիշ բառերը, որոնք հիմնականում նույն միտքը, նույն հասկացությունը արտահայտելով՝ տալիս են նաև նրա առանձին և տարբեր նյութանները, երանգները:

Ընկ. Սևակը, անկասկած, գիտե, որ երևի հենց այդ է պատճառը, որ ԿՐՈՅՈՑ հասկացությունն արտահայտող բառը մեր լեզվում միայն «ճգնաժամը» չէ, այլև՝ «տագնապ», «ընտրաժամ», «ախտաժամ», «բուրհան» (որ նշանակում է «հիվանդության վտանգավոր օրը» - տե՛ս Աճառյանի Արմ. բառ., հ. I, [1926], էջ՝ 1218 - 19), ապա նաև «շրջակետ» և որոշ առումով անպայման և՛ «օրհաս»:

Ա՛րդ, միթե ընկ. Սևակը կարծում է, որ բոլոր այս բառերը միանգամայն ավելորդ են, քանի որ կա «ճգնաժամը»: Նա չի՞ զգում արդյոք, որ նայած տեղին, դեպքին և կոնկրետ հանգամանքին՝ գրողի համար ներքին խոր պահանջ կարող է առաջանալ գրելու ոչ թե «ճգնաժամ», կամ թե՛ այս բոլոր բառերից որևէ մեկը, այլ հենց հատկապես «կրիզիս»:

Ես կարծում եմ, որ շատ լավ են անում մեր գրողները, թարգմանիչները և ոճաբանները, երբ որ չեն ուզում կառչած մնալ ընկ. Սևակի տված բառերի չքավորական պայրկից և գրական ասպարեզ են հանում էլի նոր բազմաթիվ հոմանիշ բառեր, որոնցից յուրաքանչյուրը իր տեղում և՛ լավ է, և՛ հարմար:

Ողջ խնդիրն, իմ կարծիքով, բառի տեղը գտնելն է:

Մեր գրողներից շատերը պարզապես բառի տեղը չեն գտնում:

Եվ ընկ. Սևակի բերած մոտոյների զգալի մասը հենց դրա ապացույցն էր: Բայց սա ի՞նչ տենդենց է, որ ...

Սա ուղղակի լեզու չիմանալ է նշանակում: Լեզվին լավ չտիրապետել է նշանակում:

Եթե ընկնենք նման օրինակների հետևից՝ իբր թե ինչ-որ տենդենցներ ապացուցանելու համար, ես էլ կարող եմ ասել, որ իմ դատական աշխատանքի ժամանակ մեղադրյալներից մեկը խնդրում էր դատարանից ներողամիտ լինել, որովհետև ինքը «կուլակ չէ՛ տարր է ...»

Մեկ ուրիշը պատմում էր, որ ինքը իր առաջին գողությունը կատարել է «պոչեքրեդում» (очередь խոսքը նրան որևէ բան չէր ասում, բայց որովհետև очередь միշտ պոչ է, նա ստեղծել էր մի նոր բառ):

Կամ թե՛ հենց երկու օր առաջ ընկ. Ն. Ջարյանը «Խ. Հ.» գրած իր ակնարկում՝, Գկարագրելով կոլտնտեսության ձիերին, ասում է.

«Ուժ և ուրախություն է ծորում ֆուտբոլի պես կոկիլիկ և կլոր Գրանց գավակներին»:

Սա էլ տեղեկն է, ընկերներ, այլ՝ անգիտություն:

Ընկ. Ջարյանը լավ չգիտե երևի, որ ֆուտբոլ կոչվում է խաղը և որ նա՛ իբրև այդպիսին՝ ոչ կլոր է, ոչ կոկիլիկ:

Կլոր, բայց ո՛չ կոկիլիկ է ֆուտբոլի՝ առանձին լաթերից կարած գնդակը: Բայց ընկ. Ջարյանի համար դա, ըստ երևույթին, կարևոր չէ: Ինչպես և այն, որ նրա Գկարագրած ձիերը ուրախանում են իրենց ... գավակներով:

Խնդրության շատ արտասովոր մի վայր, բայց աչքի և ճաշակի խնդիր է՝ չվիճենք:

☛**Եզ երրորդ.**

Մեր գրողներից ոմանք՝ երևի մասսային հասկանալի լինելու համար՝ հաճախ գործ են անում բարբառներ և ժարգոն, և կարծում են, թե դա լավ է:

Դարձյալ թյուրիմացություն:

Ընկ. Սևակը մի՞թե չգիտե, որ սա պարզապես Գյութին մոտենալու, այն լավագույն կերպով ձևավորելու մեթոդի խնդիր է:

Երկի հերոսին կարելի է խոսեցնել կամ հեղինակի գրական լեզվով, կամ՝ հենց իր իսկ հերոսի հարազատ բարբառով:

Թե մեկ և թե մյուս եղանակին դիմելը շատ հաճախ պայմանավորված է բուն երկի Գյութով:

Այսպես, Յանովսկու «Ցասումը», որ 1929 թ. ես փոխադրել եմ հայերեն, իհարկե, կարելի էր փոխադրել և մաքուր գրական լեզվով:

Բայց ես անձամբ այդպես չկարողացա վարվել: Դեպքերը բոլորն էլ կատարվում էին գյուղական միջավայրում, գործում և խոսում էին՝ այն պահին դեռևս մոթալփափախավոր և տրեխավոր միջակ ու չքավոր գյուղացիներ: Տարօրինակ և կեղծ էր թվում ինձ, որ նրանք գրական լեզվով խոսեն, և՛ գործը առաջ չէր գնում:

Բայց փորձեցի բարբառը, և մարդիկ լեզու առան, կենդանացան: Նյութը գնաց և գտավ իրեն համապատասխան ձևը: Սա շատ բնական է:

Սակայն, օրինակ, սրանից մի 3-4 տարի առաջ Քելչիչքենդում մի շատ երիտասարդ գրող պիես էր գրել ... Չեմբերլենի կյանքից, և Չեմբերլենն այնտեղ խոսում էր մաքուր Դարալազյազի բարբառով:

Անտարակույս, այդ Չեմբերլենին այնտեղ բոլոր հանդիսականներն էլ լավ հասկացել էին, որովհետև պիեսը տեղում կատարվել էր ինքնագործ թատրոնի կողմից, բայց դուք պատկերացնո՞ւմ եք, ընկերներ, թե դա ի՞նչ Չեմբերլեն է եղել: Մանավանդ, որ տեսողներն ասում էին, որ եվրոպական զգեստ չգտնելով՝ սըր Ոստին Չեմբերլենը բեմ էր բարձրացել չուխայով, կարտուզով և մոնոկլով:

Եթե բարբառն օգտագործող մեր հեղինակները այն մեթոդով գրեին, ընկ. Սևակը կարող էր ասել, որ հասկանալի դառնալու համար՝ դիմում ենք սխալ ձևերի:

Բայց մեր գրողներից ոչ մեկն այդպես չի վարվել:

Սա փաստ է:

☛**Եզ չորրորդ և վերջին.**

Մեր գրական լեզուն ճոխացնելու համար մենք պետք է դիմենք և՛ գրաբարի, և՛ բարբառների, և՛ եվրոպական՝ արդեն միջազգայնացած բառերի օգնության:

Այդպես էլ վարվում ենք:

Խնդիրը միայն չափի զգացումը չկորցնելն է:

Խնդիրը միայն նպատակահարմարության սկզբունքը չխախտելն է:

Հենց այսօր, Գայելով մեր շրջանային բազմաթիվ թերթերից մեկը, ես գտա այսպիսի մի տող՝ Գվիրված մեր կարմիրբանակայիններից.

«Ահա՛ կանգնել են նրանք -

ամեն մեկը ոնց որ հսկա մի բազատիր...»

Նախ՝ այդ «բազատիրը» հազիվ թե այնքան տարածված և միջազգայնացած մի բառ է, որ հասկանալի լինի շատերին և անմիջապես պատկեր (образ) ստեղծի: Եվ ապա՝ եթե արդեն մարդը **богатырь** է, էլ «հսկա»-ն ո՞րն է: Կարո՞ղ է, օրինակ, թզուկ **богатырь** լինել: Կամ՝ նույն թերթում Ա. Օայթոնը գրում է.

«Էն առույգ բանվորը
զավոդից եկած» ...

Կարիք կա՞ր արդյոք զուտ ոռուսական և նույն գործարանը նշանակող այս բառը վերցնել և գրել հայերեն տառերով: Սա ինչո՞ւ է ուժեղացնում մեր լեզվի բառապաշարը: Իհա՛րկե՛ն ոչնչով:

Երբեմն՝ հույժ օրիգինալ պատկերավոր ոճ ստեղծելու տեղիով բռնված մեր գրողները գործ են անում բավական արտաոտոց դարձվածքներ. ինչպես, օրինակ, նույն ընկ. Ջարյանը՝ վերջերս լույս տեսած «Երիտգրողի» No 2-ում:

Նա հենց չափի զգացումը պահպանելու բարի ցանկությամբ խորհուրդ է տալիս երիտասարդ գրողներին այնպես օգտվել մանկության հիշողություններից, որ «զբրվածքի մեջ գաղափարական փորլուծություն չառաջանա...»

Երևի ընկ. Նաիրին կարծել է, թե շատ հաջող պատկեր է ստեղծել: Եվ սա դեռ չափը պահպանված ոճ է: Երևակայու՞մ եք՝ ինչե՛ր պիտի կատարվեր խեղճ ու կրակ «Երիտգրողի» էջերի վրա, եթե ընկ. Ջարյանը մի քիչ պակաս կորեկտ և քաղաքավար լիներ: Երբ որ գրողն, ահա՛, այս տեղերն է հասնում օրիգինալ լինելու մարմաջով բռնված՝ անպայման կարիք է զգացվում կտրուկ և շուտափույթ օգնության: Այս բոլորից հետո, կարծում եմ, որ ընկ. Սևակը մի հիմնական հարցի պիտի պատասխաներ:

Արձանագրելով մեր այսօրվա գրական լեզվի ապրած դժվարությունները, նա պիտի գլխավորապես կանգ առներ այդ դժվարությունները հաղթահարելու կոնկրետ միջոցառումների վրա:

Ելնելով մեր ամենօրյա մամուլի լեզվի արդի խառնափնթոր վիճակից, նրա շտամպացած և ոչ հայկական ոճերից
(աշխատանք տանել ...
հարցը կայանում է նրա մեջ, որ ...
դիմավորենք չորրորդ կվարտալին ... և այլն, և այլն),

նա պետք է փորձ աներ նշելու այստեղ, թե՛ ինչ պետք է անել շատ գործնական, շատ կոնկրետ կերպով՝ մեր գրական լեզուն մաքրելու, ճոխացնելու և հարստացնելու համար:

Բավական չէ ասել, թե պետք է օգտվել բարբառներից:
Դեռ պետք է ասել, թե՛ ինչպես օգտվել:
Բարբառներից կարելի է օգտվել՝ և՛ բառապաշար վերցնելով նրանցից, և՛ այլ կերպ, որ մասնավորապես ինձ համար առավել զնահատելի է, օգտվել նրանց բառակազմության մեթոդից, ձևերից:

Բարբառները գիտեն երբեմն զարմանալի վարպետությամբ սղել բառերը: Դա մեզ շատ անհրաժեշտ է այժմ, երբ որ մենք արդեն սկսել ենք և այն էլ շատ ուժգին թափով երկու և երեք հարկանի բառեր կազմել:

Հետո նրանք մեծ ճաշակով և հմտությամբ վերջավորել գիտեն բառերը՝ առանց մեր գրական լեզվի «ույթուն»-ների և «ույթ»-երի միջամտության:

Օտտ կարևոր է մեզ համար:
Եվ շատ լավ կլիներ, եթե ընկ. Սևակը, իբրև մասնագետ, մի քանի խոսք ասեր այս խնդիրների մասին:

Այնուհետև՝ ինչպե՞ս պետք է օգտվել գրաբարից: Պարզ է, որ խոսքը քերականական ձևերը յուրացնելու մասին չէ: Ըստ երևույթին՝ բառամթերքը պիտի յուրացնել, օգտագործել: Բայց՝ ինչպե՞ս:

Ջեկուցողը գտնում է, օրինակ, որ մեր արևմտահայ լեզուն շատ և շատ սիրուն և կոկիկ բառեր ունի, որոնցից մենք ևս անպայման պիտի օգտվենք:

Բայց հենց արևմտահայ լեզուն խոշոր չափով օգտվել է գրաբարի լեզվական շտեմարանից: Ա՛րդ, ինչպե՛ս են վարվել արևմտահայ գրողները, ի՞նչ մեթոդներ են կիրառել, ո՞րն է ուսանելի՞ն նրանց աշխատանքում, ոչինչ չաասաց, մինչդեռ՝ երբ խնդիր է դրված «մեր գրական լեզվի բարելավման մասին», անկարելի է չշոշափել այս՝ ո՛չ միայն մեթոդական հարցերը:

Կամ թե՛ եվրոպական բառերի օգտագործումը:

Մեզ մոտ այսօր, հիրավի, մի տեճնեց կա՝ յուրացնել ամեն մի եվրոպական, իսկ վերջին տարիներս, նաև ոռուսական բառ և համարել դրանք հարազատորեն հայերեն:

Ես հաշվել եմ, որ «Խ. Հ.» ամեն մի սյունակը, որ բաղկացած է շուրջ 130 տողից, պարունակում է իր մեջ մոտ 50 եվրոպական և մոտ 20 ոռուսական բառ: Եթե ընդունենք, որ լրագրական սյունակի մեկ տողը վերցնում է միջին թվով 5 բառ, ապա դուրս կգա, որ շուրջ 650 բառից մեկ սյունակում մոտ 70-ը օտար բառեր են, որ հավասար է մոտավորապես 11 տոկոսի:

Մի քիչ շատ է, ընկերներ, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ «Правда»-յի և «Известия»-յի յուրաքանչյուր սյունակում օտար բառերի տոկոսը 2½-3 տոկոսից ավել չի բարձրանում: Սա նշանակում է, որ այդ թերթերում կա մայրենի լեզվի ավելի ճոխ և ավելի համարձակ օգտագործում, քան մեզ մոտ:

Մենք շատ հաճախ հրաժարվում ենք թարգմանելուց անգամ իսկ այնպիսի բառերը, ինչպիսին են՝ дисциплина, район, завод, прогульщик, пункт, темп, переводик և այլն:

Ես վերջացնում եմ, ընկերներ:

Մեր գրական լեզվի բարելավման խնդիրը շատ կարևոր և շատ հրատապ խնդիր է: Մենք այս գործը թողել ենք մի տեսակ ինքնահոսի:

Սա անպայման սխալ տեսակետ է:

Ընկ. Սևակը շատ լավ արեց, որ ձեռնամուխ եղավ այդ գործին:

Բայց որովհետև նա լավ ձեռնամուխ չեղավ, ես առաջարկ եմ մտցնում, որ խնդիրը քննությունը, նրա բազմակողմանի արծարծումը շարունակվի և որ այս անգամ լուրջ և մշակված գեկուցումներով հանդես գան իրենք գրողները:

Այս կլիճի և՛ շատ արժեքավոր, և՛ շատ կարևոր ու անհրաժեշտ մի ձեռնարկություն:

Ծանոթագրություններ

¹ Ն. Զարյանի «ՄՏԿ՝ գունարած Քաղաքին» ակնարկը, ուր արված է այս համեմատությունը, տե՛ս «Սորհորդային Հայաստան», 1933, 24 հոկտեմբեր (թիվ 247):

² Ինչպես վկայում է ժամանակակիցը, «Երեսնական թվականներին Երևանում, ինչպես և շրջաններում, գրական խմբակներին թիվ չկար... Գրական բազմաթիվ խմբակներից մեկն էլ Երևանի կոոպերատիվ և առևտրի աշխատողների երիտասարդական գրական խմբակն էր, որի անդամներին ուղղակի անվանում էինք «կոոպարի գրողներ» (Վահան Հովսեփյան, Չարենցյան մտաբերումներ. «Հուշեր Եղիշե Զարենցի մասին», Եր., 1986, էջ 192): Այս խմբակը 1933թ. հրատարակել է «Երիտգրող» հանդես («Օրգան ՀԽԳՄ Կազմկոմիտեին կից Կոոպար միության գրական խմբակի»), որ միայն երկու համար է ունեցել: Ն. Զարյանի «Ինչպես եմ գրել «Ռուշանի քարտի» հոդվածը տպագրվել է երկրորդ՝ վերջին համարում (էջ 18-19):

А. Г. МАДОЯН - *Тигран Ахумян о вопросах развития литературного языка*. - 26 ноября 1933 года состоялась дискуссия, посвященная вопросам армянского литературного языка. В ней приняли участие видные писатели и ученые. К сожалению, пресса того времени уделила мало внимания этой интересной дискуссии. Тот давний пробел отчасти компенсирует настоящая публикация, которая представляет выступление заслуженного деятеля культуры Армении Тиграна Ахумяна (1894-1973), содержащее целый ряд основательных, достойных внимания соображений и замечаний писателя, переводчика, ученого.